# Խումբ N 3 Շահագործում

Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է, եթե`

1. Թեթև ավտոմոբիլների դողերի պահպանաշերտի մնացորդային բարձրությունը կազմում է 1.8 մմ:
2. Խախտված է հիդրավլիկ արգելակային հաղորդակի հերմետիկությունը:
3. Երկու դեպքում էլ:

Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է, եթե`

1. Բեռնատար ավտոմոբիլի դողերի պահպանաշերտի մնացորդային բարձրությունը կազմում է 1.6 մմ:
2. Չի գործում պնևմատիկ արգելակային հաղորդակի ճնշաչափը:
3. Երկու դեպքում էլ:

Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է, եթե`

1. Առկա են ղեկային կառավարման մանրամասերի (դետալների) ու հանգույցների` կառուցվածքով չնախատեսված տեղաշարժեր կամ պարուրակային միացումները ձգված չեն:
2. Բեռնատար ավտոմոբիլում բացակայում է կրակմարիչը:
3. Երկու դեպքում էլ:

Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է, եթե`

1. Սահմանված ռեժիմով չեն աշխատում արտաքին լուսային սարքերը:
2. Մոտոցիկլի դողերի պահպանաշերտի մնացորդային բարձրությունը կազմում է 0.6 մմ:
3. Երկու դեպքում էլ:

Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է, եթե`

1. Յետին հակամառախուղային լապտերիկները միացված են տրանսպորտային միջոցի արգելակումն ազդարարող լուսային սարքերին:
2. Չի աշխատում շարժիչը հովացնող հեղուկի ջերմաստիճանի ցուցիչը:
3. Երկու դեպքում էլ:

Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է, եթե`

1. Շարժիչն աշխատում է ընդհատումներով:
2. Դողերն ունեն անվադողի հենքը (կորդը) մերկացնող տեղային վնասվածքներ:
3. Չեն աշխատում թեթև մարդատար ավտոմոբիլի սրահի ներքին լուսավորության սարքերը:
4. Թվարկած բոլոր դեպքերում:

## *Խումբ N 3 Շահագործում*

Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է, եթե`

1. Առանց կողային կցորդի մոտոցիկլում բացակայում է «Վթարային կանգառ» նշանը:
2. Դողերը չափերով կամ թույլատրելի բեռնվածությամբ չեն համապատասխանում տրանսպորտային միջոցի տվյալ մոդելին:
3. Երկու դեպքում էլ:

Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է, եթե`

1. Բացակայում է դողի անվահեցի ամրացման հեղյուսներից թեկուզ մեկը:
2. Նույն սռնու վրա տեղադրված են պահպանաշերտի տարբեր նախշանկարներով դողեր:
3. Երկու դեպքում էլ:

Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է, եթե`

1. Բացակայում են կառուցվածքով նախատեսված նստատեղերի գլխակալները:
2. Նույն սռնու վրա տեղադրված են նոր և վերականգնված դողեր:
3. Երկու դեպքում էլ:

Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է, եթե`

1. Արտածվող գազերում վնասակար նյութերի պարունակությունը գերազանցում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված ցուցանիշները:
2. Մոտոցիկլի վրա բացակայում են կառուցվածքով նախատեսված ոտնատեղերը:
3. Երկու դեպքում էլ:

Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է, եթե`

1. Խախտված է շարժիչի հենատուփի օդափոխության համակարգի հերմետիկությունը:
2. Խախտված է շարժիչի սնման համակարգի հերմետիկությունը:
3. Երկու դեպքում էլ:

Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է, եթե`

1. Խախտված է շարժիչի հենատուփի օդափոխության համակարգի հերմետիկությունը:
2. Նույն սռնու վրա` տեղադրված են ցրտադիմացկուն և ոչ ցրտադիմացկուն դողեր:
3. Երկու դեպքում էլ:

Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է, եթե՝

1. Չեն աշխատում կառուցվածքով նախատեսված ապակեողողիչները:
2. Շարժիչի արտաքին աղմուկի թույլատրելի մակարդակը գերազանցում է ստանդարտով սահմանված մեծությունը:
3. Երկու դեպքում էլ:

Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է, եթե՝

1. Շարժիչն աշխատում է ընդհատումներով:
2. Հետին հակամառախուղային լապտերիկները միացված չեն արգելակումն ազդարարող լուսային սարքերին:
3. Չեն աշխատում տրանսպորտային միջոցի կառուցվածքով նախատեսված ապակեողողիչները:
4. Թվարկած բոլոր դեպքերում:

Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է, եթե՝

1. Տեղադրված են երթևեկության մասնակիցներին վնասվածքներ հասցնելու վտանգ պարունակող իրեր կամ առարկաներ:
2. Չի աշխատում ձայնային ազդանշանի սարքը:
3. Երկու դեպքում էլ:

Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է, եթե՝

1. Մոտոցիկլի և կողային կցորդի շրջանակների միացումներում առկա է խաղացք:
2. Առջևի մասում տեղադրված են դեղին գույնի լույսերով հակամառախուղային լապտերներ:
3. Երկու դեպքում էլ:

Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է, եթե՝

1. Բեռնատար ավտոմոբիլում բացակայում է բժշկական դեղատուփը:
2. Առջևի մասում տեղադրված են սպիտակ գույնի լուսանդրադարձնող հարմարանքներ:
3. Երկու դեպքում էլ:

Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է, եթե՝

1. Կողային կցորդով մոտոցիկլում բացակայում է բժշկական դեղատուփը:
2. Անսարք է քարշակի հենակցման հարմարանքը:
3. Երկու դեպքում էլ:

# *Խումբ N 3 Շահագործում*

| Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է, եթե՝<br><br>1. Չեն աշխատում տրանսպորտային միջոցի կառուցվածքով նախատեսված անվտանգության ամրագոտիները:<br>2. Տեղադրված են վարորդի նստատեղից նրա տեսադաշտը սահմանափակող իրեր կամ առարկաներ:<br>3. Երկու դեպքում էլ: | Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է, եթե՝<br><br>1. Առանց տրանսպորտային միջոցի հաշվառումն իրականացնող մարմնի թույլտվության՝ տրանսպորտային միջոցի կառուցվածքում կատարված են փոփոխություններ (վերասարքավորումներ):<br>2. Առջևի մասում տեղադրված են դեղին գույնի լույսերով շրջադարձի ցուցիչներ:<br>3. Երկու դեպքում էլ: |
|---|---|
| Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է, եթե՝<br><br>1. Մեխանիկական տրանսպորտային միջոցը, որով իրականացվում է գործնական վարման ուսուցում, չունի համապատասխան ճանաչման նշան:<br>2. Չի աշխատում վառելիքի մակարդակի ցուցիչը:<br>3. Երկու դեպքում էլ: | Մոտոցիկլների շահագործումն արգելվում է, եթե՝<br><br>1. Բացակայում են կառուցվածքով նախատեսված անվտանգության աղեղները:<br>2. Դողերի պահպանաշերտի նվազագույն մնացորդային բարձրությունը կազմում է 1,6 մմ:<br>3. Երկու դեպքում էլ: |
| Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է, եթե՝<br><br>1. Առջևի մասում տեղադրված են դեղին գույնի լույսերով շրջադարձի ցուցիչներ:<br>2. Բացակայում է դողի անվահեցի ամրացման հեղյուսներից թեկուզ մեկը:<br>3. Երկու դեպքում էլ: | Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է, եթե՝<br><br>1. Առջևի մասում տեղադրված են նարնջագույն լույսերով շրջադարձի ցուցիչներ:<br>2. Անսարք է քարշակի քարշակցման հարմարանքը:<br>3. Երկու դեպքում էլ: |

Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է, եթե`

1. Առջևի մասում տեղադրված են սպիտակ գույնի լուսանդրադարձնող հարմարանքներ:
2. Անսարք է քարշակի քարշակցման հարմարանքը:
3. Երկու դեպքում էլ:

Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է, եթե`

1. Բացակայում են կառուցվածքով նախատեսված անվտանգության ամրագոտիները:
2. Հետևի մասում տեղադրված են սպիտակ գույնի լույսերով հետընթացի լապտերիկներ:
3. Երկու դեպքում էլ:

Կողային կցորդով մոտոցիկլների շահագործումն արգելվում է, եթե`

1. Բացակայում է կառուցվածքով նախատեսված` թամբի վրայի ուղևորի համար լայնակի բռնատեղը:
2. Դողերի պահպանաշերտի մնացորդային բարձրությունը կազմում է 0.6 մմ:
3. Բացակայում է բժշկական դեղատուփը:
4. Թվարկած բոլոր դեպքերում:

Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է, եթե`

1. Չի աշխատում կառուցվածքով նախատեսված` վարորդի նստատեղի դիրքը կարգավորող մեխանիզմը:
2. Չեն աշխատում ավտոբուսի սրահի ներքին լուսավորության սարքերը:
3. Երկու դեպքում էլ:

Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է, եթե`

1. Չեն աշխատում թեթև մարդատար ավտոմոբիլի սրահի ներքին լուսավորության սարքերը:
2. Բացակայում են կառուցվածքով նախատեսված նստատեղերի գլխակալները:
3. Երկու դեպքում էլ:

Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է, եթե`

1. Հետևի մասում տեղադրված են կարմիր գույնի լուսանդրադարձնող հարմարանքներ:
2. Չի աշխատում կառուցվածքով նախատեսված արագաչափը:
3. Երկու դեպքում էլ:

Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է, եթե`

1. Թեթև մարդատար ավտոմոբիլի ղեկային կառավարման համակարգի գումարային խաղացքը գերազանցում է 10 աստիճանը:
2. Բացակայում են` կառուցվածքով նախատեսված ցեխապաշտպան գոգնոցները և ցայտապաշտպանիչները:
3. Երկու դեպքում էլ:

Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է, եթե`

1. Դժվարությամբ է գործի դրվում շարժիչը:
2. Ավտոբուսում բացակայում է բժշկական դեղատուփը:
3. Երկու դեպքում էլ:

Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է, եթե`

1. Թեթև մարդատար ավտոմոբիլում բացակայում է բժշկական դեղատուփը:
2. Հետևի մասում տեղադրված են կարմիր գույնի լույսերով հետընթացի լապտերիկներ:
3. Երկու դեպքում էլ:

Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է, եթե`

1. Ավտոբուսում բացակայում է «Վթարային կանգառ» նշանը:
2. Հետևի մասում տեղադրված են սպիտակ գույնի լույսերով հաշվառման համարանիշի լուսավորման լապտերիկներ:
3. Երկու դեպքում էլ:

Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է, եթե`

1. Թեթև մարդատար ավտոմոբիլի կցորդի դողերի պաշտպանաշերտի նախշանկարի մնացորդային բարձրությունը պակաս է 1,6 մմ-ից:
2. Հետևի մասում տեղադրված են նարնջագույն լույսերով շրջադարձի ցուցիչներ:
3. Երկու դեպքում էլ:

Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է, եթե`

1. Խախտված է հիդրավլիկ արգելակային հաղորդակի հերմետիկությունը:
2. Հետևի մասում տեղադրված են սպիտակ գույնի լույսերով շրջադարձի ցուցիչներ:
3. Երկու դեպքում էլ:

## *Խումբ N 3 Շահագործում*

Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է, եթե՝

1. Նույն առնու վրա տեղադրված են տարբեր կառուցվածքների դողեր:
2. Խախտված է շարժիչի սնման համակարգի հերմետիկությունը:
3. Երկու դեպքում էլ:

Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է, եթե՝

1. Չի աշխատում ձայնային ազդանշանի սարքը:
2. Յովացման համակարգը չի ապահովում շարժիչի աշխատանքի կայուն ջերմային ռեժիմը:
3. Երկու դեպքում էլ:

Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է, եթե՝

1. Ղեկային կառավարման պարուրակային միացումները ձգված կամ սահմանված ձևով սևեռված չեն:
2. Ավտոբուսում բացակայում են կրակմարիչները:
3. Երկու դեպքում էլ:

Տրանսպորտային միջոցների շահագործումն արգելվում է, եթե՝

1. Առկա են ղեկային կառավարման մանրամասերի (դետալների) ու հանգույցների՝ կառուցվածքով չնախատեսված տեղաշարժեր:
2. Առջևի մասում տեղադրված են սպիտակ գույնի լույսերով շրջադարձի ցուցիչներ:
3. Երկու դեպքում էլ: